



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

## ՀՐԱՄԱՆ

No 808-Ա/2

«24» հունիսի, 2020 թ.

**ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ  
ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ  
ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ  
ԹԵՄԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» N 1122 որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետը, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի փետրվարի 13-ի N 06-Լ հրամանը և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի ապրիլի 30-ի N 484-Ա/2 հրամանով ձևավորված մասնագիտական փորձագիտական խորհրդի 2020 թվականի հունիսի 22-ի նիստի արձանագրությունը, ինչպես նաև ելնելով բյուջետային հատկացումների ծավալից՝

### Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Հաստատել գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում երկակի նշանակության ծրագրերի աջակցության մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրոսյանին՝ ապահովել

գիտական թեմաների ֆինանսավորումը՝ համաձայն հավելվածով սահմանված ժամանակացույցի և պայմանի:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայրցյանին:

**Նախարար**

**Արայիկ Հարությունյան**

**Ց Ա Ն Կ**

**ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԿԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ**

Հ/հ	Թեմայի ղեկավար	Բնագավառ	Թեմայի վերնագիր	Կազմակերպություն	Ֆինանսավորման սկիզբ
1	Աղաջանյան Նելլա Նիկոլայի	Քիմիա, Քիմիական տեխնոլոգիաներ	Տիտանի, ցիրկոնիումի և նրանց ինտերմետաղական միացությունների հիդրիդների՝ որպես ռեակտիվ նյութերի բարձրլինեթետիկ հավելուկների կամ բաղադրիչ մասերի, ԲԻՍ տեխնոլոգիաների մշակումը	ՀՀ ԳԱԱ «Ա.Բ. Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ	01.07.2020թ.
2	Արամյան Արթուր Ռազմիկի	Ֆիզիկա և աստղագիտություն	Գերձայնային, պտուտակավոր թռչող օբյեկտներից և հզոր հարվածող ալիքներից առաջացող գեր ցածր հաճախային էլեկտրամագնիսական և ակուստիկ ալիքների բազմասարք՝ ընդունիչ-ուժեղացուցիչ-անալիզատոր, գրանցման համակարգեր	ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ	01.07.2020թ.
3	Արզումանյան Աշոտ Մանուկի	Քիմիա	Տետրոնիտրատ պենտոէրիտրիդի /ՏԷՆ/ սինթեզման տեխնոլոգիայի մշակում	«ԱՐԻԱԿ» Կիրառական քիմիայի ինստիտուտ ՓԲԸ	01.07.2020թ.
4	Զաքարյան Տիգրան Վանիկի	Էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ	Արագ շարժվող օբյեկտների մոտակա հայտնաբերման հնարավորությունների ուսումնասիրում	ՀՀ ԳԱԱ «Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ	01.07.2020թ.
5	Կնյազյան Նիկոլայ Բաբկենի	Քիմիա, Քիմիական տեխնոլոգիաներ, Նյութագիտություն	Սպեկտրի ինֆրակարմիր տիրույթում թափանցիկ ապակիներ՝ օպտիկական սարքաշինության և գիշերային տեսողության սարքերի համար	ՀՀ ԳԱԱ «Մ.Գ. Մանվելյանի անվան ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ» ՊՈԱԿ	01.07.2020թ.

6	Մանուկյան Արամ Սպարտակի*	Ֆիզիկա և աստղագիտություն	Ֆեռոմագնիսական մետաղ-աժխաձնային նանոկոմպոզիտների հիմքով նոր սերնդի կլանիչների մշակում և պատրաստում	ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ	08.01.2021թ.
7	Մարգարյան Հակոբ Լևոնի	Նանոտեխնոլոգիա	Զերմաստիճանային լայն տիրույթում աշխատող, տեսադիտարկող սարքերին համակցված դեկավարվող օպտիկական ֆիլտր	ՀՀ ԿԳՄՄՆ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	01.07.2020թ.
8	Մարտիրոսյան Արթուր Եղիշեի	Էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ	Նորարարական հայեցակարգի շրջանակում ջերմային սենսորների օգտագործումը օբյեկտների դիտարկման նպատակով	ՀՀ ԳԱԱ «Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ	01.07.2020թ.
9	Ներկարարյան Խաչատուր Վլադիմիրի	Ֆիզիկա և աստղագիտություն	Մետամակերևույթների կիրառությունները միկրոալիքային տիրույթում	ՀՀ ԿԳՄՄՆ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	01.07.2020թ.
10	Սահակյան Վլադիմիր Գրիգորի	Էլեկտրատեխնիկա, էլեկտրոնիկա, էներգետիկա, համակարգչային և տեղեկատվական տեխնոլոգիաներ; Ինֆորմատիկա և համակարգչային գիտություններ	Անօդաչու թռչող սարքի ավտոմատ տեղորոշման և վերալիցքավորման բանական համալիր	ՀՀ ԳԱԱ «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ	01.07.2020թ.

\* Արամ Սպարտակի Մանուկյանի թեմայի ֆինանսավորումը կսկսվի ընթացող երկակի նշանակության ծրագրի ավարտից հետո՝ փորձագիտական հանձնաժողովի կողմից ամփոփիչ հաշվետվության վերաբերյալ դրական եզրակացության դեպքում: